ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/11586-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-886-03.03.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 291 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-886-03.03.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նշված է, որ նախագծի ընդունումը պայմանավորված է պատվի և արժանապատվության արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությամբ և նպատակ է հետապնդում պատվի և արժանապատվության պաշտպանության գործերով դատական քննության համար առավել սեղմ ժամկետներ սահմանել, որպեսզի ապահովվի այդ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Մասնավորապես՝ նախագծով լրացվող «Պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վարույթի ժամկետները» հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հայցերը առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթների հետ կապված վերոնշյալ ժամկետի պահպանման առումով կարող են խնդիրներ առաջանալ: Այսպես՝ եթե օրինակ գործին մասնակցող անձանցից մեկը չստանա ուղարկված ծանուցագիրը, ապա ծանուցումը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 6-րդ մասով, որի դեպքում անձը համարվում է ծանուցված 15-րդ օրը: Իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատասխանողը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան է ներկայացնում հայցադիմումի պատասխան: Նման դեպքում անհնար կլինի ապահովել երկամսյա ժամկետում գործի քննությունը առնվազն այն պատճառով, որ գրեթե մեկ ամիսը (ծանուցման 15 օր + պատասխանի 14 օր = 29 օր) կծախսվի դատական քննության կազմակերպման համար:

Այս առումով հարկ է նկատի ունենալ նաև ՀՀ դատական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված դատավորի վարքագծի կանոնները, որոնց համաձայն՝ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը: Մինչդեռ առաջարկվող կարգավորման պարագայում գործնականում անհնար է լինելու ապահովել արդարադատության շահերը երկամսյա ժամկետում:

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև դատավորի վարույթում առկա բազմաթիվ այլ գործերի քանակը, մասնավորապես՝ հրատապ լուծում պահանջող գործերը (օրինակ՝ հայցի ապահովման վերացման միջնորդություն (15-օրյա ժամկետ), աշխատանքային վեճեր (երեք ամիս), պաշտպանական որոշման կիրառման մասին վեճեր (10-օրյա ժամկետ), Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ վեճեր (10-օրյա ժամկետ) և այլն):

Դատական նիստերի նշանակման վիճակագրությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ Երևան քաղաքում դատական նիստերը լավագույն դեպքում նշանակվում են մեկ-երկու ամիս հետո, ընդ որում՝ օբյեկտիվ պատճառներով, առանց որևէ չարաշահման:

Հարկ է նշել, որ Արդարադատության նախարարության կողմից մշակված և ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության դատական իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի 1-ին հավելվածի համաձայն՝ որպես ռազմավարական ուղղություն նշվում է դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովումը: Ըստ վիճակագրության՝ եթե 2013 թվականի ընթացքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 48 540 քաղաքացիական գործ, ապա 2017 թվականին այդ թիվը կազմել է 137 003 գործ, իսկ 2018 թվականին՝ 129 941 քաղաքացիական գործ: Դատարանների գերբեռնվածությունը խոչընդոտում է դատական գործերի արագ և արդյունավետ քննությանը՝ հանգեցնելով անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումների:

Ինչ վերաբերում է առհասարակ ՀՀ դատարանների ծանրաբեռնվածությանը, ապա պետք է նշել, որ թեև մի քանի տարի առաջ դատավորների ծանրաբեռնվածությունն արդեն իսկ բարձր էր, սակայն ներկայումս դատարանների ծանրաբեռնվածությունն էլ ավելի բարձր է: Երևան քաղաքում քաղաքացիական մասնագիտացում ունեցող մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թվականին կազմել է 632 քաղաքացիական գործ, 2014 թվականին՝ 1068 քաղաքացիական գործ, իսկ 2018 թվականին՝ արդեն 1290 գործ: Այսինքն 2013-2014 թվականների ընթացքում տարիների կտրվածքով Երևան քաղաքում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում էր 850 քաղաքացիական գործ (632+1068=1700:2=850), ինչը 2018 թվականի դրությամբ արդեն իսկ զգալիորեն ավելացել է: Ելնելով նաև Եվրոպայի խորհրդի կողմից անցկացված վիճակագրական տվյալների համակարգման արդյունքներից՝ պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում 100

000 բնակչին բաժին է ընկնում 8 դատավոր, մինչդեռ այլ երկրներում այդ թիվը էականորեն ավելի մեծ է: Օրինակ՝ Սերբիայում՝ 38, Սլովենիայում՝ 43, Մոնակոյում՝ 99, Ավստրիայում՝ 27, ՌԴ-ում՝ 18, Իտալիայում՝ 11, ԳԴՀ-ում՝ 24, Նորվեգիայում՝ 11, Շվեյցարիայում՝ 15, Շվեդիայում՝ 12, Բոսնիա և Հերցեգովինայում՝ 29, Մոնտենեգրոյում՝ 51, Լեհաստանում՝ 26, Ուկրաինայում՝ 15:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նախագծով լրացվող «Պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վարույթի ժամկետները» հոդվածի 1-ին մասում «երկամյա ժամկետում» բառերը փոխարինել «եռամյա ժամկետում» բառերով:

Բացի այդ, առաջարկում ենք քննարկել նշված վարույթի շրջանակներում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար մեկ ամիս, իսկ բողոքի քննության համար՝ երեք ամիս ժամկետ սահմանելու հարցը:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածում սահմանված կարգավորումների, ինչպես նաև 22-27.1 գլուխների հաջորդականությունը, առաջարկում ենք «Պատվին, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման գործերի» գլուխը լրացնել որպես 27.2 գլուխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 291 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-886-03.03.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-886-03.03.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1 Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 202-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ՝ 8-րդ կետով.

«8) Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման գործերի վարույթը»

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետեյալ բովանդակությամբ՝ 22.1 գլխով.

«Գլուխ 22.1 Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման գործերի վարույթը

Հոդված 203.1 Հայցադիմումը վարույթ ընդունելը

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հոդված 203.2 Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման վարույթի ժամկետները .

1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման հայցերը առաջին ատյանի դատարանում քննվում եւ լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո ՝ երկամսյա ժամկետում:

2. Վերաքննիչ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված բողոքը քննում եւ որոշում է կայացնում բողոքը վարույթ ընդունելուց հետո երկամսյա ժամկետում:

Հոդված 203.3 Հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը:

1. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում:»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների եւ ազատությունների անքակտելի հիմքն է:»:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու արժանապատվությունն անխախտելի է:»: Սահմանադրական դրութերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ մարդու իրավունքները եւ ազատություններն ամենից առաջ սկսվում են նրա արժանապատվությունից: Անձի պատվի եւ

արժանապատվության պաշտպանությունը պետք է իրականացվի խելամիտ ժամկետներում՝ որպես այդ իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխիք: Մինչդեռ, առկա իրավակարգավորումը, փաստորեն, չի նպաստում նման պահանջների արագ քննությանն ու լուծմանը, ինչի արդյունքում գրեթե վերանում է հիշյալ պանաջներով դատական հայցեր ներկայացնելու եւ խախտվածշ իրավունքը պաշտպանելու՝ անձի մտադրությունը: Երբեմն տարիներով ձգձգվող դատավարությունների արդյունքում, փաստորեն, հնչեցված զրպարտության կամ վիրավորանքի տեքստը շրջանառվում է զանգվածային լրատվության միջոցներով, եւ անձը ստիպված է լինում պարբերաբար լսել իր պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող հայտարարությունները, նյութերը, հրապարակումները եւ տեւական ժամանակ մնալ դրանց հոգեբանական ազդեցության ներքո: փաստորեն, գործող օրենքով նախատեսված ժամկետները չեն նպաստում խախտված արժանապատվության արդյունավետ պաշտպանությանը:

Պատվի եւ արժանապատվության պաշտպանությունն իրականացվում է միայն դատական կարգով: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մարդիկ չեն գնում իրենց պատիվը եւ արժանապատվությունը դատական կարգով պաշտպանելու ճանապարհով՝ դրա երկար քննության պատճառով: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ Պետությունը չի ստեղծել բոլոր նախադրյալները, որպեսզի մարդն իր անօտարելի արժանապատվության պաշտպանությունը իրականացնի արժանապատիվ պայմաններում: Պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման վարույթները, ըստ էության, չեն իրականացվում բարդ ընթացակարգով: Հայցվորը հայցում ներկայացնում է դեպքը, կցում է ապացույցներ, դատարանը գնահատում է ապացույցները եւ կայացնում վերջնական դատական ակտ: Սույն գնահատողական գործընթացը տեւում է ամիսներ, նույնիսկ՝ տարիներ, ինչի արդյունքում մարդիկ նպատակահարմար չեն գտնում դիմել դատարան իրենց իրավունքների պաշտպանության համար:

Նախագծով առաջարկվում է պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման վարույթն ընդգրկել ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Հատուկ հայցային վարույթներ» ենթաբաժնում: Սահմանել հստակ ժամկետ նման վարույթով գործերի քննության համար, քանի որ նման գործերն իրենցից ապացուցողական բարդություն չեն ներկայացնում: